



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. հունիսին /վերլուծություն/

2003թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 5928 գործարքներ, որոնք 2002թ. հունիսի համեմատ աճել են 26.1%-ով, իսկ 2003թ մայիսի համեմատ՝ 14.4%-ով:

2003թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2497 օտարման գործարքների 91.4%-ը կազմել են առուվաճառքները, 7.9%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 50.4%-ն արձանագրվել են Երևան քաղաքում, իսկ 52.6%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. հունիսին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.1%-ով, իսկ 2003թ. մայիսի համեմատ՝ 4.7%-ով: 2003թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի 1142 առուվաճառքի գործարքների 70.6%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 16.5%-ով, իսկ 2002թ. հունիսի համեմատ՝ 6.5%-ով:

2003թ. հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. հունիսին համարժեք է 585.0 դրամի /

Համայքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.հունիս /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		հունիս 2003թ.	մայիս 2003թ.	հունիս 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	387.3	381.5	262.0
Արաբկիր	150.0-550.0	274.7	270.0	161.0
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	172.0	160.9	96.0
Նոր-Նորք	90.0-240.0	130.1	126.9	97.0
Ավան	90.0-190.0	127.6	126.4	88.0
Էրեբունի	90.0-300.0	143.8	137.5	86.0
Շենգավիթ	80.0-250.0	137.0	135.0	93.0
Դավթաշեն	100.0-250.0	163.6	162.9	95.0
Աջափնյակ	80.0-220.0	138.7	134.3	85.0
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	139.6	135.0	87.0
Նուբարաշեն	50.0-100.0	65.8	57.0	41.0
Երևան	50.0-970.0	170.9	166.1	108.3

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

2003թ. հունիսին Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական միջին գների ամսեկան էական աճ չի արձանագրվել (2.9%), իսկ տարեկան աճը՝ 57.8%:

2003թ. հունիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 366 բնակարաններ, որոնց քանակը մայիսի համեմատ աճել է 9.6%-ով, իսկ 2002թ. հունիսի համեմատ՝ 3.1%-ով: 2003թ. հունիսին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.հունիս /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			հունիս 2003թ.	մայիս 2003թ.	հունիս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.3	62.2	56.8
	Ապարան	18.0-40.0	27.2	27.1	25.6
	Թալին	18.0-40.0	25.0	24.9	21.0
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.3	54.2	52.2
	Մասիս	20.0-90.0	54.4	54.3	48.5
	Վեդի	20.0-45.0	31.5	31.5	28.9
	Արարատ	22.0-50.0	31.5	31.4	27.0
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	84.0	83.8	71.8
	Արմավիր	21.0-58.0	45.5	45.5	41.7
	Մեծամոր	17.0-50.0	30.6	30.5	28.5
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	30.5	29.4
	Գավառ	20.0-50.0	30.2	30.1	29.2
	Մարտունի	18.0-38.0	29.5	29.3	28.0
	Վարդենիս	10.0-21.0	17.0	17.0	16.0
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	60.8	60.6	56.2
	Ստեփանավան	20.0-48.0	33.1	33.0	28.6
	Սյիտակ	17.0-40.0	23.8	23.7	21.5
	Ալավերդի	15.0-40.0	25.4	25.3	22.3
	Տաշիր	15.0-28.0	19.3	19.2	18.0
Կոտայք	Արուսյան	40.0-110.0	83.5	82.3	79.5
	Նոր Հաճն	35.0-75.0	51.8	51.7	50.3
	Բյուրեղավան	15.0-45.0	35.2	35.1	32.0
	Եղվարդ	28.0-55.0	40.3	40.2	35.8
	Հրազդան	18.0-55.0	30.6	30.5	27.2
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.3	75.2	75.0
	Չարենցավան	13.0-55.0	30.9	30.8	26.8
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	71.6	70.5	64.5
	Արթիկ	17.0-45.0	25.2	25.1	22.5
	Մարալիկ	15.0-33.0	23.5	23.4	23.5
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.6	29.5	26.3
	Կապան	18.0-52.0	28.9	28.9	25.4
	Միսիան	17.0-37.0	27.5	27.4	23.8
	Մեղրի	17.0-36.5	25.0	24.9	21.0
	Քաջարան	13.0-30.0	18.3	18.2	14.6
Վայոց ձոր	Վայք	15.0-48.0	35.2	35.2	31.0
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.8	46.7	44.0
	Ջերմուկ	18.0-50.0	41.0	40.9	37.7
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.1	36.0	32.5
	Իջևան	23.0-60.0	40.3	40.3	38.3
	Բերդ	15.0-43.0	29.1	29.0	26.7
	Նոյեմբերյան	21.0-45.0	26.6	26.5	24.5

2003թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել (0.3 %), իսկ տարեկան աճը կազմել է 9.1% :

2003թ. հունիսին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 333 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 101, մյուս մարզերում միասին վերցրած՝ 232: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 14.0%-ով, այդ թվում Երևան քաղաքում՝ 9.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 16.0%-ով: 2003թ. մայիսի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.2%-ով, ընդ որում Երևանում աճել է 7.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ նվազել 12.5%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. հունիսին անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. հունիս /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		հունիս 2003թ.	մայիս 2003թ.	հունիս 2002թ.
Կենտրոն	210.0-990.0	390.0	385.0	270.0
Արաբկիր	160.0-580.0	277.0	272.0	166.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	174.0	162.0	100.0
Նորք-Մարաշ	185.0-640.0	292.0	290.0	218.0
Ավան	95.0-200.0	129.0	128.0	89.5
Էրեբունի	95.0-320.0	145.0	139.0	98.0
Շենգավիթ	85.0-260.0	138.0	136.0	91.0
Դավթաշեն	105.0-260.0	165.0	164.0	95.0
Աջափնյակ	85.0-230.0	140.0	137.0	91.0
Մալաթիա-Մեքաստիա	95.0-250.0	141.0	136.0	93.0
Նուբարաշեն	55.0-110.0	68.0	58.0	45.0
Միջինը Երևանում	55.0-990.0	187.2	182.5	123.3

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2003թ. հունիսին Երևանում անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել, աճը կազմել է 2.6%, իսկ տարեկան աճը՝ 51.8%:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. հունիս /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			հունիս 2003թ.	մայիս 2003թ.	հունիս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-110.0	82.4	82.2	75.3
	Ապարան	20.0-55.0	38.7	38.6	34.6
	Թալին	15.0-55.0	28.1	28.1	23.4
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	61.6	61.5	56.1
	Մասիս	27.0-80.0	62.4	62.4	60.9
	Վեդի	25.0-60.0	36.2	36.2	34.5
	Արարատ	25.0-60.0	37.3	37.3	34.3
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	89.0	88.6	85.0
	Արմավիր	35.0-90.0	52.1	52.0	47.3
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	36.3	36.3	33.5
	Գավառ	25.0-65.0	39.8	39.8	37.0
	Մարտունի	20.0-60.0	33.7	33.7	30.7
	Վարդենիս	15.0-45.0	21.1	21.1	19.0
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	68.1	67.8	63.8
	Ստեփանավան	20.0-50.0	33.3	33.1	31.8
	Սպիտակ	17.0-50.0	24.1	24.1	19.4
	Այվերդի	18.0-50.0	25.7	25.7	23.0
	Տաշիր	12.0-35.0	19.8	19.7	18.5
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	92.2	91.7	86.7
	Նոր Հաճն	35.0-80.0	54.2	54.0	50.2
	Բյուրեղավան	15.0-50.0	38.1	38.1	33.0
	Եղվարդ	23.0-60.0	47.1	47.0	42.6
	Հրազդան	25.0-65.0	39.8	39.7	36.1
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.8	84.8	82.1
	Չարենցավան	25.0-60.0	33.3	33.2	29.0
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	90.4	89.6	85.4
	Արթիկ	18.0-60.0	28.5	28.5	24.5
	Մարալիկ	15.0-55.0	23.9	23.8	21.5
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.4	31.3	27.0
	Կապան	25.0-65.0	30.9	30.8	27.5
	Սիսիան	18.0-50.0	28.4	28.4	25.1
	Մեղրի	15.0-30.0	28.1	28.1	23.4
	Քաջարան	15.0-30.0	19.2	19.2	16.2
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.9	36.9	31.9
	Եղեգնաձոր	20.0-65.0	49.0	48.9	48.2
	Ջերմուկ	25.0-60.0	43.0	42.9	38.6
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.1	39.1	35.9
	Իջևան	30.0-70.0	41.0	40.9	39.5
	Բերդ	20.0-55.0	30.7	30.7	27.5
	Նոյեմբերյան	20.0-55.0	30.6	30.6	27.4

2003թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել (0.2 %), իսկ տարեկան աճը կազմել է 8.9% :

2003թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 466 գործարքներ /168.11 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում Երևան քաղաքում՝ 11.71 հա/: Հողի օտարման 224 գործարքներն /141.44 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 453-ը հանդիսացել են առուվաճառքի, 11-ը՝ նվիրատվության և 2-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 23 գործարքներում /5.1%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձինք:

2003թ. հունիսին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 52.0%-ով, իսկ 2003թ. մայիսի համեմատ՝ նվազել 5.6%-ով: Ընդ որում, 2003թ. հունիսին պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ առուվաճառքներից 22-ն իրականացվել են աճուրդների միջոցով, որոնցից 13-ը բնակելի կառուցապատման /տնամերձ/, 2-ը գյուղատնտեսական, 1-ը արդյունաբերական օբյեկտների /Կոտայքի մարզում/, իսկ 6-ը հասարակական կառուցապատման հողեր են:

Ստորև ներկայացվել է 2003թ. հունիսին մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր				գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	14	0.87	23	4.77	0	0.00	36	1.95	10	1.66
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	27	15.55	14	1.56	0	0.00
Արարատ	0	0.00	8	0.82	1	0.01	61	20.79	38	3.44	2	0.05
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	34	34.71	15	1.22	3	0.26
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.21	1	0.03	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	6	1.69	2	0.11	0	0.00
Կոտայք	1	0.17	4	0.32	0	0.00	56	21.68	50	5.65	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	21	32.05	2	0.27	4	0.08
Սյունիք	1	1.00	0	0.00	0	0.00	3	2.00	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	3	6.96	0	0.00	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	1	0.06	2	1.80	2	0.13	0	0.00
ԸՆԴԱՄԱՆՔ	2	1.17	26	2.01	25	4.84	215	137.44	160	14.36	19	2.05

2003թ. հունիսին հանրապետությունում վաճառված 4 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 3 միավորը /1.84հա/ գրանցվել են Երևանում: 2003թ հունիսին Երևանում գրանցվել է հողի վարձակալության իրավունքի վաճառքի 2 գործարք:

2003թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 217, այդ թվում աճուրդ-վաճառքների 2 և 2 դատարանի վճռով (վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն) գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների

վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						19	7.16	840.0	7600.0	2320.0
Ապարան						4	0.97	130.0	500.0	290.0
Ծաղկահովիտ						3	6.22	170.0	2100.0	300.0
Թային						1	1.21	200.0	1680.0	350.0
Արարատի մարզ										
Մասիս						10	3.86	400.0	3100.0	1020.0
Վեդի						16	6.57	680.0	7200.0	1160.0
Արտաշատ						35	10.36	1040.0	6060.0	2060.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						15	10.48	980.0	11150.0	2140.0
Արմավիր						12	9.84	650.0	4650.0	1210.0
Բաղրամյան						7	14.39	130.0	1000.0	400.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի								100.0	4000.0	475.0
Գավառ						2	0.21	420.0	1100.0	660.0
Սևան								100.0	1000.0	406.0
Վարդենիս								60.0	1180.0	230.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Լոռու մարզ										
Գուգարք						2	0.44	500.0	6000.0	1250.0
Ստեփանավան								180.0	4000.0	320.0
Այվազ						2	0.49	360.0	5500.0	850.0
Տաշիր								100.0	350.0	230.0
Սպիտակ								500.0	3300.0	1060.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	0.17	670.0	670.0	670.0	34	7.58	520.0	10100.0	4140.0
Եղվարդ						20	12.80	380.0	6100.0	2130.0
Հրազդան						2	1.30	250.0	4000.0	710.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						12	10.80	550.0	760.0	640.0
Ամասիա								80.0	2300.0	225.0
Արթիկ						2	1.03	140.0	2300.0	260.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Անի						7	20.21	240.0	310.0	300.0
Սյունիքի մարզ										
Սիսիան						2	1.47	90.0	1500.0	250.0
Մեղրի						1	0.53	400.0	4240.0	900.0
Կապան	1	1.00	256.0	256.0	256.0			120.0	2000.0	330.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	6.96	260.0	4000.0	1760.0
Վայք								120.0	3400.0	380.0
Տավուշի մարզ										
Իջևան								530.0	4000.0	1150.0
Նոյեմբերյան						2	1.80	100.0	8340.0	700.0
Բերդ								100.0	2000.0	460.0

2003թ. հունիսին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 136 առուվաճառքի գործարքներ, որից աճուրդ-վաճառքների 12 և դատարանի վճռով 1 գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ- վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագո յն	Առավելա գույն	Միջին			Նվազագո յն	Առավելա գույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						13	13080.0	120.0	3800.0	2260.0
Ապարան						1	2500.0	120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Մասիս	6	6205.0	140.0	170.0	150.0	17	13890.0	270.0	3680.0	820.0
Վեդի						12	12420.0	115.0	1000.0	495.0
Արտաշատ	2	2000.0	340.0	340.0	340.0	9	8080.0	175.0	2460.0	655.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						13	8973.0	280.0	3700.0	1295.0
Արմավիր						2	3200.0	180.0	2440.0	660.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի						1	330.0	120.0	320.0	225.0
Գավառ								180.0	1000.0	520.0
Սևան								120.0	1000.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Լոռու մարզ										
Ստեփանավան						1	61.9	78.0	340.0	145.0
Գուգարք						1	1020.0	78.0	3800.0	610.0
Սպիտակ								78.0	450.0	160.0
Ալավերդի								78.0	440.0	200.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	3200.0	125.0	125.0	125.0	34	30837.0	180.0	4300.0	1510.0
Եղվարդ						14	24557.0	180.0	3670.0	1990.0
Հրազդան						1	600.0	180.0	4120.0	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	2740.0	120.0	2500.0	390.0
Անի								120.0	430.0	190.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Սյունիքի մարզ										
Միսիան								78.0	450.0	230.0
Գորիս								78.0	670.0	385.0

Կապան								78.0	1000.0	380.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր								78.0	990.0	290.0
Վայք								78.0	1000.0	205.0
Տավուշի մարզ										
Իջևան						2	1310.0	78.0	1600.0	400.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0

Պետք է նշել, որ հանրապետությունում 2003թ. հունիսին գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող հողերի անհատույց տրամադրման 14 գործարքներ:

2003թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 656 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 40.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 21.5%-ով, իսկ 2003թ. մայիսի համեմատ՝ 28.4%-ով:

2003թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 35 բնակարանների, 11 բնակելի տների, 137 հասարակական, 9 արտադրական նշանակության օբյեկտների, 2 ավտոտնակի և 462 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. հունիսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 198 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. հունիսի համեմատ, աճել են 2.7 անգամ, իսկ 2003թ. մայիսի համեմատ՝ 2.4 անգամ:

Ընդհանուր առմամբ, 2003թ. հունիսին հանրապետությունում վարձակալվել են 1328.34 հա ընդհանուր մակերեսով հողեր /36.47 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 1287.86 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 499.65 հա նախկին պահուստային/, 1.71 հա բնակավայրերի, 2.3 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 440.80 հա գյուղատնտեսական նշանակության, առավել փոքր՝ Լոռվա մարզում՝ 2.15 հա, որից 2.06 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 417.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. հունիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	200.00	14	48.98
Արարատ	0	0.00	57	173.06
Արմավիր	0	0.00	13	307.81
Գեղարքունիք	2	217.00	37	223.80
Լոռի	0	0.00	4	2.06
Կոտայք	0	0.00	27	34.79

Շիրակ	0	0.00	6	8.66
Սյունիք	0	0.00	25	40.23
Վայոց Ձոր	0	0.00	12	27.27
Տավուշ	0	0.00	3	4.20
Ընդամենը	3	417.00	198	870.86

2003թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 381 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2003թ. մայիսի համեմատ, նվազել է 4.8%-ով, իսկ 2002թ. հունիսի համեմատ՝ աճել 44.9%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 49.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /23.9%/, առանձնատների /10.2%/ և հողերի /12.3%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 213 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. հունիսի համեմատ, աճել է 40.1%-ով, իսկ 2003թ. մայիսի համեմատ՝ 11.5%-ով:

2003թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 47.94 հա մակերեսով հողեր, որից 47.85 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 29.05 հա, որից 28.96 հա գյուղատնտեսական նշանակության, առավել փոքր՝ Վայոց Ձորի մարզում՝ 1.30 հա գյուղատնտեսական նշանակության:

2003թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 11 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3 %:

2003թ. մայիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 37.5%-ով, իսկ 2002թ. հունիսի համեմատ՝ 61.5%-ով: 2003թ. հունիսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Սյունիքի մարզում՝ 26.7% :

2003թ. հունիսին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 798 գործարքներ, որոնց քանակը 2003թ. մայիսի համեմատ աճել է 11.6%-ով, իսկ 2002թ. հունիսի համեմատ՝ 43.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.5%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /46.6%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն